ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վահրամ Բաղդասարյանի, Վահրամ Մկրտչյանի, Նաիրա Կարապետյանի, Ռուզաննա Մուրադյանի, Կարինե Պողոսյանի, Գագիկ Մելիքյանի, Ռոբերտ Սարգսյանի և Արմեն Կարապետյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-717-06.02.2015-ՊԻ-010/0*) վերաբերյալ:

Ներկայացված նախագծի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի իմաստով վարչական իրավախախտումն այն արարքն է (գործողությունը կամ անգործությունը), որը դրսևորվում է սույն օրենսգրքի հատուկ մասում ամրագրված և վարչական պատասխանատվություն ենթադրող պարտականությունների կատարումից տևականորեն խուսափելով: Մինչդեռ, անհրաժեշտ է

նկատի ունենալ, որ վարչական պատասխանատվությունը սահմանվում է 50-ից ավելի իրավական ակտերով, հետևաբար միայն օրենսգրքի հատուկ մասում ամրագրված վարչական պատասխանատվության մասին հիշատակելը սույն հոդվածի շրջանակներում հասկանալի չէ և հիմնավորման կարիք ունի:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև «շարունակվող վարչական իրավախախտում» հասկացության սահմանմանը:

Հարկ ենք համարում տեղեկացնել նաև, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N ՆԿ-96-Ա կարգադրության 2-րդ կետով հաստատված Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումներում նախատեսվել և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը հանձնարարվել է մշակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որում տրվելու են նաև շարունակվող և տևող վարչական իրավախախտումների հասկացությունները:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ: Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով *հստակեցվում են վարչական իրավախախտումների տեսակները և դրանց համար նախատեսված ժամկետները, մասնավորապես՝ ամրագրվում են տևող և շարունակվող իրավախախտումների հասկացությունները* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունմամբ նախատեսվում է հստակեցնել տևող և շարունակվող վարչական իրավախախտումների տեսակները և դրանց համար նախատեսված ժամկետները:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

Եզրակացություն

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Առաջարկվող օրենքի Նախագիծը ընդունելու դեպքում կապահովվեն իրավական որաշակիության սկզբունքի հիման վրա վարչական իրավախախտումների տեսակների և դրանց համար նախատեսված պատասխանատվության ենթարկելու ժամկետների հստակությունը և իրավակիրառական պրակտիկայի միասնականությունը:

Միաժամանակ հայտնում ենք, որ Նախագծի թե ընդունումը, թե չընդունումը, ինչպես ՀՀ պետական բյուջեի, այնպես էլ համայնքային բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-717-06.02.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 9-րդ հոդվածը լրացնել հետեյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն օրենսգրքի իմաստով տեւող վարչական իրավախախտումն այն արարքն է (գործողությունը կամ անգործությունը), որը դրսեւորվում է սույն օրենսգրքի հատուկ մասում ամրագված եւ վարչական պատասխանատվություն ենթադրող պարտականությունների կատարումից տեւականորեն խուսափելով: Շարունակվող վարչական իրավախախտումը, սույն օրենսգրքի իմաստով, այն միաբնույթ գործողությունների միմյանց հետ փոխկապված համակցությունն է, որոնց իրականացմամբ անձը խուսափում է սույն օրենսգրքի հատուկ մասում ամրագրված եւ վարչական պատասխանատվություն ենթադրող պարտականությունների կատարումից:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը եւ առկա խնդիրները

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի գործող խմբագրության մեջ ներկայումս բացակայում են տեւող եւ շարունակվող իրավախախտումների հասկացությունները: Միաժամանակ Օրենսգրքի 37-րդ հոդվածը, սահմանելով վարչական տույժ նշանակելու ժամկետները, կարգավորումն իրականացնում է այն տրամաբանությամբ, որպեսզի հնարավոր լինի տարանջատել ընդհանրապես վարչական տույժ նշանակելու համար նախատեսված ժամկետների վերաբերյալ ընդհանուր կանոնը տեւող եւ շարունակվող իրավախախտումների համար վարչական տույժ նշանակելու համար նախատեսված ժամկետի վերաբերյալ սահմանված հատուկ կանոնից: Միաժամանակ Օրենսգրքի ընդհանուր բովանդակությունից հստակորեն չի որոշակիանում այն իրավախախտումների շրջանակը, որոնք կարող են բնութագրվել որպես տեւող կամ շարունակվող, ինչպես նաեւ չկան այն հստակ չափանիշները, որոնց հիման վրա հնարավոր կլինի այս կամ այն վարչական իրավախախտումը դասակարգել տեւող կամ շարունակվող իրավախախտման թվին: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե նորմատիվ ակտում կիրառվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, ապա այդ իրավական ակտով պետք է տրվեն դրանց սահմանումները: Այս հարցին անդրադարձ է կատարվել նաեւ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 08.04.2014թ. ՍԴՈ-1143 որոշման մեջ, որում, մասնավորապես, նշված է. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի տեքստում տեւող եւ շարունակվող իրավախախտումների սահմանումների բացակայությունն իրավական հասկացության օրենսդրական կանոնակարգման բացակայություն է»:

Առաջարկվող լուծումները

Հաշվի առնելով նշված իրավիճակը եւ խնդիր ունենալով ապահովելու իրավակարգավորման բացի նորմատիվ իրավական լուծումը եւ ՀՀ օրենսդրության՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին համապատասխանեցման անհրաժեշտությունը՝ առաջարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում ամրագրել տեւող եւ շարունակվող իրավախախտումների հասկացությունները:

Ակնկալվող արդյունքը

Նշված փոփոխությունների իրականացմամբ կապահովվեն իրավական որոշակիության սկզբունքի հիման վրա վարչական իրավախախտումների տեսակների եւ դրանց համար նախատեսված պատասխանատվության ենթարկվելու ժամկետների հստակությունը եւ իրավակիրառական պրակտիկայի միասնականությունը: